Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

572
F-80

323-1

ԱՊՍՏԱՄԲ ՍԱՍՈՒՆԸ

ՄԻ ԷՋ ՍԱՍՈՒՆԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԴԷՊՔԵՐԻՑ

Նկարագրեց՝ ԳԼԱԿ ՏԱՐՕՆՑԻ

—

Հրատարակութիւն
ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԺԸՆԵՎ

1903

25 APR 2013

13030

ՊԵՏ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՍՍՌ ԱԳՆ
Ա. ԲԱՐ, 4, ՄԱՏԵՆԱՐԱՆ
Ա. ՄԱՍԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3891-48

ՇԷՆԸՔԻ ԺՈՂՈՎԸ

—

1894 թվի յուլիսի 15-ն էր։ Արևը հազիւ մար մտած՝ Սասնոյ Շէնքը գիւղում, Մօսէի Գրիգոյի տանը հաւաքւել էին Սասնոյ իշխաններն ու գործիչները՝ իրանց վտանգաւոր դրութեան վրայ մտածելու։

Մօսէի Գրիգօն գիւղի հարուստ իշխաններիցն էր։ Նրա տունը նահապետական մեծ օջախ էր, որին, շնորհիւ իր ձեռք բերած բարոյական ազդեցութեան, թէ սասունցիք և թէ շրջակայ քիւրդերն ու թիւրքերը վերաբերվում էին մեծ պատկառանքով։ Թէև երիտասարդ, սակայն լինելով կարդացող, տիրացու և միանգամայն ճարտարախօս և քաջարի՝ կուի դաշտում, նա շատ յարգված էր և ընտրված գիւղի ռէս (գիւղապետ)։

Գրիգոյի տունը գրաւել էր գիւղի հիւսիսային կողմում բաւական ընդարձակ տեղ։ Տան մէջ աչքի էր ընկնում հիւրասենեակը, որի երկու կողմից՝ մէջէ մէջ բացւում էին մի քանի սենեակների դռներ, այնպէս որ տունը լինելով եօթ եղբայրների բաժին, ամեն մէկը իր առանձին սենեակն ունէր։ Հիւրասենեակի դիմաց, միջանցքի միւս կողմը տարածւում էր մի մեծ թոնրատուն, որը ծառայում էր թէ իբրև տնտեսութեան տեղ և թէ իբրև կանանոց։

Այդ օրը, ամբողջ տունը ծայրէ ի ծայր, ցորենի ամբարների նման, լի էր երկաթ բազմութեամբ։ Հիւրասենեակում՝ իշխաններն և գործիչները, ամեն մէկը իր յատուկ տեղն էր բռնել. օջախից սկսած մինչև ստորին մասերը, մինչև դռան եռաը՝ մարդիկ էին խռնւել. նոյն իսկ միջանցքներում և կողքի սենեակներում՝ բազմութիւնը շարժւելու տեղ չունէր։

Ներկայ եղողները մտախոհ էին. նրանց ճակատների վրայ ակնյայտնի երևում էր մի ինչ որ տխրութիւն, մի ինչ որ հոգեկան խոր յուզմունք: Բոլորն էլ գրգռած էին երևում, բոլորն էլ ուզում էին խօսել, մի բան ասել, բայց էլի լռում էին և անհամբեր սպասում մէկին. . .

Այդ մէկը Համբարձումն Բոյաճեանն էր, նախկին սան Կ. Պոլսի Բժշկական դպրոցի, որ Սասնոյ Ժողովրդին յայտնի էր Մուրատ անունով: Տեսնելով որ բոլոր գործիչներն ու իշխանները հաւաքւել են և ժողովուրդը պատրաստ է լսելու, երիտասարդ պրոպագանդիստը ոտքի ելաւ, գլխարկը ձեռքն առած, և ձայնը բոլորին լսելի անելու համար՝ մի քիչ առաջ եկաւ և սկսեց բարձրաձայն խօսել.

„Եղբայրներ, Սասունը պաշարուած է: Չեղ յայտնի է առաջի օրեան արիւնահեղ ընդհարումը Բագրկանցի աշիրաթի հետ: Կառավարական զօրքը արդէն եկել հաստատւել է մեզանից մէկ երկու ժամ հեռու, Մէրկէ-Մօղանում, և քիւրդ աշիրաթներն ու հրոսակախմբերը իրանց անթիւ վոհմակներով պաշարել են մեր լեռները: Պատերազմը անխուսափելի է, իսկ մեր դրութիւնը վատ, որովհետև մենք անպատրաստ ենք: Սակայն իմ կարծիքով, մենք չպէտք է վհատւենք, այլ Սասունի վաղեմի սովորութեան համաձայն՝ պիտի ջանանք մինչև մեր արեան վերջին կաթիլը պաշտպանել մեր հայրենի լեռները, մեր ընտանեկան սուրբ օջախը: Խնդրում եմ ներկայ եղողներից՝ մտածել, որ շուտով մի ելք գտնենք: Բոպէները թանգ են մեզ համար. Թշնամին այլ ևս միջոց չի տալիս երկար մտածելու:“

Հաղիւ երիտասարդը վերջացրել էր իր խօսքը, որ Շէնքի ռէս Գրիգոն, յուզած ոտքի ելաւ և սկսեց կրակոտ կերպով խօսել.

„Հէնը բավ՝, էլ ինչ որ մտածենք. ավ տայի է

լը սրբ, չի բօղտկի չի թիղքի: Քիւրդերէն առածը ասում է. „Ջուրը ծածկեր է գլուխ, ինչ արշին, ինչ թիզ“: Մինթէ՞ մեր պապերը, որ կռուով ապրեցին, շատ էին մտածում և կամ մեր շատ մտածող եղբայրները ինչ եղան և ինչ են լինելու: Ահա դուշմանը եկել է մեր դուռը, ուզում է մեր տերը լինել մեր օջախը քանդել տակն ու վրայ ընել, մեզ գերել, տանել բանտարկել. Մինթէ՞ մոռցանք մեր քաջ իշխաններ Ազոյի և Գուրգէի նամոցանք մեր քաջ իշխաններ Ազոյի և Գուրգէի նամատակութիւնը թուրքական բանտերում: Մեր Թշնամին —ձեռքով ցոյց տալով դէպի դուրս—ուզում է թրքացնել մեր կոյս աղջիկներին, կին-զաւակներին, քանդել մեր եկեղեցիները և ոտնակոխ անել մեր ընտանեկան պատիւը, նամուսը: Մինթէ՞ մենք տղամարդ չենք. էլ ո՞ր օրայ համար ենք ապրում: Ես իմ 120 մարդկանցով պատրաստ եմ. բոլորս էլ ուխտել ենք մեռնիլ և գլուխ չծռել Թշնամուն: Կամ մահ կամ ազատութիւն:“

Երբ Գրիգոն մի քիչ հանդարտւեց և թոյլ տւեց, որ ուրիշներն էլ խօսին, Դալլորիկցի Տէր-Գաբրիէլը գիմելով Գրիգոյին ասաց. „Մենք առայժմ կարող ենք ձեզ օգնել ոչ աւելի քան 300 մարդով, որովհետև Խաչոյի Գասպարը Մայր խումբով ստիպւած է սպասել Դալլորիկում, ինչպէս երևում է, այն կողմից ևս շուտով յարձակում պիտի սկսի: Միայն պէտք է ասեմ, որ մենք բնաւ պատրաստութիւն չունինք, ոչ հացի, ոչ զէնքի“:

Կրակոտ Գրիգոն, սաստիկ բորբոքւած, ոտքի ելաւ և գոչեց. „Հէնը, էլ ինչ պատրաստութիւն պիտի տեսնինք, ինչ հաց, ինչ բան, քանի որ մեռնելու ենք: Հաց չկայ, հը, հէնը բոլորիս համար չբկայ, խոտ կ'ուտենք, արմատ կը կրծենք: Իսկ զէ՞նք: Միևնոյնն է, մենք ունինք մեր հին չախմախլի հրացանները, ինչ որ ունին մեր Թշնամի քիւրդերը. իսկ եթէ նրանք նոր տեսակից էլ պիտի ունենան, մենք ինչ անենք, չէ՞ որ մահն էլ մեր կողմն է

միշտ։ Մեր կռիւը օրհասական է, մենք պիտի պաշտպանենք մեր նամուսը և պիտի կռւենք մեր երկրի համար, մեր աղատութեան համար“։

Ամբողջ ժողովուրդը միահամուռ ձայնակցեց Գրիգոյին, կրկնելով. „Այո՛, այո՛, կռւի՛նք, կռւի՛նք“։

Սակայն գանուեց մէկը, որ հակառակեց այս աղաղակին. Գէլիէ-Գուզանի ներկայացուցիչ Տէր Պետրոսն էր, որ խօսեց այսպէս. „Սիրելի եղբայրներ, իմ կարծիքով պէտք է հաշտութիւն առաջարկել և եթէ հնարաւոր է՝ աշխատենք մի քանի զիջումներով այս տարի էլ վըտանգը անցկացնել, մինչև եկող տարի, տեսնենք Աստուած ողորմած է, մի բան կը լինի։ Մանաւանդ այժմ, ինչպէս գիտէք, հացը քաղելու վախտն է, ապրանք, պաշար ձեռք բերենք, յետոյ ինչ որ անելու ենք, անենք„։

Մի քանի կտրուկ ու խիստ բողոքներից յետոյ, խօսք առաւ Գէլիէ-Գուզանի ռէս Աւօն, որ խիստ խոհուն ու լուրջ մի գլուխ էր. „Մենք, ի հարկէ, չպէտք է ցոյց անենք և աշխատելու ենք խռովութեան տեղի տուող դէպքերից խուսափել, բայց ինչպէս գիտել տաւ Մուրատը, սպառնացող վտանգից խուսափելու հնար չկայ։ Տէր Պետրոսը ասում է՝ թէ պէտք է աշխատենք զիջումներ անել, բայց ի՞նչ զիջումներ։ Թուրքը „երկու ոտք դրել է մէկ կօշիկում“ և եօթ տարեան բ ա խ ի ա ճնացած 175,000 ղրուշի տուրքը միանգամից ուզում է գանձել. բացի դրանից նա խստիւ պահանջել է, որ Դալորիկի և Սասնոյ բոլոր երևելիները, թիւով 67, իրանց քահանաներով մէկտեղ՝ Մուշ կառավարութեան դուռը երթան և հպատակութեան ու հաւատարմութեան խոստում տան։ Եւ իբրև երրորդ պայման՝ պահանջում է, որ սասունցիք միահամուռ երդում տան կառավարութեան՝ թէ որևիցէ մի օտար մարդ չը պիտի ընդունին իրենց մէջ և եղածներին էլ պիտի բռնեն ու կառավարութեան յանձնեն։ Եւ կ'ուզէ՞ք, որ մենք բոլորս էլ գնանք և Թուրքի ձեռքում տանջանքով նահատակւինք և, կամ դաւաճան Յուդայ դառնա՞նք և մեր հիւր եղբայրներին բարբարոս ռ օ մ ի ձե՞ռքը մատնենք։ Ահա՛, այս է, Տէր-բաբա, Թուրքի հետ հաշտուելու միակ միջոցը։ Գալով այն հարցին՝ թէ աշխատենք հացերը քաղել, ապրանք ձեռք բերել և յետոյ անել ինչ անելու ենք, կ'ասեմ՝ այդ միտքը շատ լաւ է, բայց թշնամին չի համբերի և ուզում է օգտուել մեր նեղ դրութիւնից։ Ուրիշ ելք չկայ, պէտք է կռւել։ Կռւենք և մեռնենք միասին։ Շէնքը, Սէմալ և Անտոք չեն կարող մեզ պատսպարան լինել. իմ կարծիքով պէտք է թողնել այդ վայրերը և քաշուել Գէլիէ-Գուզան, ու յետոյ՝ Աստուած մի արասցէ՝ եթէ շատ նեղ մնանք՝ մեր վերջին ապաւէնը թող լինին Դ ա լ ո ր ի կ ի ս ա ր ե ր ը և Ֆ ը ռ Ֆ ը ռ ք ա ր ը։

Այդ միջոցին, Գէլիէ-Գուզանի հին գիւղապետ Աւջի հօրեղբայրը, որ ճանաչւած էր ամբողջ Սասնում խ ը հ օ ր ե ղ բ ա յ ր ը, որ ճանաչւած էր ամբողջ Սասնում (հմուտ վերաբուժ էր), ռ ը ղ ջ ի պետ անունով (հմուտ վերաբուժ էր), յարգված իր անվեհերութեան համար, և մինչև այդ ժամանակ լուռ նստած էր,—տաքացաւ, խրոխտ հաղաց և առիւծային ձայն հանելով, ձեռքի շարժումով բոլորին լռեցրեց ու այսպէս սկսեց.

„Տեսնո՞ւմ էք, ալևոր մարդիս։ Տարիքս 70ի մէջն է, բայց գիտէք, ձեզանից քսանը էլի մէկ չեմ սեպեր,—ձեռքը երկնցնելով երիտասարդներին—այս 70 տարեան մէջը 37 կռիւ եմ տեսել, թող թէ պատահական մանր մունր հանաքներ։ Բայց ձեզ պիտի ասեմ որ, այս կռիւը չի նմանիլ այն կռիւներից և ոչ մէկին. սրա գոյնը և ձևը ուրիշ է, ես վախենում եմ այս կռւից։ Տեսնո՞ւմ էք այս վէրքերը (և նա ցոյց տուեց բազմաթիւ սպիներ)։ Այս վէրքերը ձեզ ցոյց տալով, չեմ ուզում ձեզ վախեցնել, այլ ընդհակառակը, ինչպէս որ ես մահից չեմ

վախենում, ցանկանում եմ որ դուք էս նոյն սիրտն ու նոյն հոգին ունենաք։ Բայց մի բան կայ,—մեր թշնամին անհամար է, թուով մեզանից շատ և բացի դրանից, ինչպէս տեղեկանում ենք, անիծեալ ռ օ մ ի սև ա ս ք ա ր ն էլ միացել է այդ անհաւատ քիւրդերի հետ։ Այնուամենայնիւ չը պիտի յուսահատւենք, պէտք է սկսենք, միայն իբրև ծերունի և փորձառու մարդ, ձեզ կ'ասեմ, որ յաղթողը նա է, ով առաջին հարւածը կը տայ։ Պէտք է կռւել, էլ սպասելու ժամանակ չունինք։ Կեցցէ կռիւ, կեցցէ Սասուն"։

Եւ բոլոր ժողովուրդը միահամուռ ձայնով արձագանք տւեց՝ „Կեցցէ կռիւ, կեցցէ Սասուն„։

Հազիւ էր լռութիւնը տիրել՝ Պետոն շարունակեց. „Այո, յաղթութիւնը կախւած է առաջին հարւածից. խորհուրդ եմ տալիս, որ գաղտնի յարձակւենք թուրք զօրքերի վրայ, որ թուով շատ քիչ են. մեր լրաբերները իմացել են, որ նրանք հազիւ 2-300 հոգի են։ Կը յարձակւենք գիշերով, փախստի կըստիպենք և նրանց զէնքերը, ռազմամթերքը և պաշարն առած՝ կը քաշւենք Գէլիի ու Դալորիկի սարերը. այնտեղ Աւոյի ցոյց տւած ծրագրով, կը պաշտպանենք մեր նամուսը և աղատութիւնը, մինչև որ մեր հեռաւոր եղբայրները մեզ օգնութեան կը հասնեն. . ."

Եւ չը նայած որ թուլամորթ Սէմալցիք սկսեցին հակառակիլ, ժողովը վճռեց յարձակումը կատարել նոյն իսկ յաջորդ գիշերը։ Ի նշան ուրախութեան սկսեցին երգել.

Մենք սրտով կարիճ ու բաժով պարթև
Հաստ, հաստ ունինք թև ու վաղենք թեթև,
Բեղրանք նստելուց, մենք կռւել կ'ուզենք.
Միայն թէ, Հայեր, տւէք մեզի զէնք։

Անօթի, ծարաւ, աղ լէ չը մնաց,
Արմատ կը կրծենք, չենք ուզեր ձեր հաց.
Անօթի, ծարաւ՝ բանի կարօտ չենք.
Լոկ միայն, Հայեր, զէնքի կարօտ ենք։

Մեր սուրբ Մըրբրէն եղնի մեզ վկայ,
Աշխարհ քընէ մրգի կարիճ մարդ չկայ.
Շէյխ մեր առջևէն փախնի քընէ կատու
Ամոթ չէ՞ մնանք Թուրքին հարկատու։

Զեղնե չընք ուզի ոսկի ո՛չ արծաթ,
Տուէք մեզ Հայեր, մէկմէկ ծակ երկաթ.
Հանդէ կը կայնենք ու առաջ վազենք,
Միայն, աղբրբուէք, տւէք մեզի զէնք։

Հազիւ երգը վերջացել էր և ժողովուրդը սկսել էր կրկին ուրախ, ուրախ խօսել պատերազմի մասին, երբ գուժկանը ներս մտաւ. „Հ ը վ ա ր է, հ ը վ ա՛ր է, Բ ը ր ր ա ն ց ի ք Գ ը ր գ օ յ ի տան ոչխար տարան"։

Շատերը զէնքի դիմեցին և դուրս գնացին. իսկ Մուրատը դառնալով ժողովականներին՝ աւելացրեց. „Տեսրատը դառնալով ժողովականներին՝ աւելացրեց. „Տեսնում էք, թշնամին այլևս միջոց չէ տալիս երկար մտածելու, բայց հոգ չէ, Գ ը ր գ օ ն և մեր խումբը գնացին քիւրդերի ետևից, իսկ մենք մտածենք վաղուան անելիքի մասին։"

Խորհրդակցութիւնը երկար չը տևեց։ Վերջանալուց յետոյ՝ Մուրատ դիմեց ժողովուրդին ու ասաց. „Եղբայրներ, արշալոյսը բացւելու մօտ է արդէն, էգուցվան մասին ինչ որ հարկաւոր է՝ մենք ժողովականների հետ մտածել վերջացրել ենք, այժմ ձեզ կը մնայ գնալ մի քիչ հանգստանալու, որ էգուց, երևկոյեան համար պատրաստ լինիք։" Եւ նոր էր ժողովուրդը ցրւել որ հայ լրաբերը ներս մտաւ ու խօսքը ուղղելով Մուրատին, յայտնեց. "Թուրքաց զօրքը հետզհետէ հեռանում է իր բանակատեղիից և մասերի բաժանւում. Բ ը ր ր ա ն ց ի ք շէյխը, քիչ առաջ օսմանցոց բանակից իր տեղը վերադարձաւ, քիւրդերի մօտ։"

Մուրատը մի քիչ մտածելով, աւելացրեց. „Երևում է, որ մեր ծրագիրը բոլորովին պիտի փոխուի. անիծեալ քիւրդերը մարդ ղրկեցին՝ եղելութիւնը զօրքին յայտնելու. ինձ թւում է, որ մենք պէտք է պատրաստուենք գետի միւս կողմը՝ դէպի Ալիանք անցնելու, որ անտառոտ և քարքարոտ լինելով, միջոց կը տայ մեզ՝ այնտեղ դիրք բռնել և երկար պաշտպանուել։“

Բոլորը լուռ լսում էին նրան և հաւանութեան նշաններ տալիս, որը՝ գլխով, որն էլ խօսքով։ Բայց յանկարծ ներս մտաւ մի այլ գուժկան, և պոռաց. „Հրվար է, հը՛յ, հրվար է. քիւրդեր, Բրբրանցիք և Բատրբցիք հեղեղի նման լեցուեցին Շէնրբի և Սէմալի գոմերը և կրակ տուին ցորենի ու գարու բարդերը„։

Այս անսպասելի լուրը առնելով, ամբողջ ժողովուրդը՝ „զէ՛նք, զէ՛նք, հրսէ՛ք, հրյ, հրսէ՛ք օգնութեան“ գոչեց։ Բոլորը զէնքերը վերցրին, իսկ Մուրատը դառնալով ժողովականներին, վերջին խօսքն ասաց. „Ես գնում եմ, իսկ դուք Տէր Գաբրիէլ, Տէր Քաջ, Պետո, Աւո, Ըռքո, Մըրտո, հաւաքեցէք ժողովուրդը և շուտով անցէք Ալիանք։ Իսկ դուք, Տէր Յովհաննէս, Դաւո, Մօսէ, վազեցէք Սէմալ՝ հաւաքեցէք ձերայնոց և միացէք, որքան կարելի է շուտով, սրանց հետ։ Մենք էլ մեր խմբերով դեռ չը լուսացած՝ ձեզ հետ կը լինենք։“

Կուռղները ցրուեցին։

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

—

Նախ քան Զայի կուին անցնելը, բացատրենք, գէթ համառօտակի, նրա պատճառները։

Սասնոյ այն կեդրոնական մասը, որ ծանօթ է Հայ-Սասուն անունով և ուր տեղի ունեցան 1894 թուի ահռելի ու տխուր անցքերը, բաղկացած է 20-22 մանր ու բ ե տ գիւղերից և գտնվում է Մուշ քաղաքից անմիջապէս հարաւ։ Նրա առաջի գիւղերը Շէնրբ և Սէմալ հեռու են այդ քաղաքից միայն երեք ժամով։ Հողային սահմանները բաժանվում են կ ո ւ ռ թ ի կ ասված լեռնաշղթայով։

Նա շրջապատուած է այնպիսի գաւառ-գաւառակներով, որոնք լի են վրանաբնակ ու խաշնարած կիսավայրենի քիւրդերով. Եղտի, Ցիկան և այլն։ Բիրմին, Բըրեանի քիւրդերով. Եղտի, Ցիկան և այլն։ Բիրմին, Բըշերիկ, Փսանայ գաւառ, Խուլի, Խարզանք, Խիանք և Ալիվան գաւառները, թէև բնիկ հայ գաւառներ են եղել և այժմ էլ դեռ պարունակում են բազմաթիւ ընտիր ու քաջարի հայեր, սակայն աշխարհագրական դիրքի պատճառով բոլորովին անջատ են միմեանցից։ Լեռնաշղթաները լեցուն են բազմաթիւ թափառաշրջիկ ու վայրենի՝ քիւրդ, թիւրք ու չինկանայ ցեղերով, որոնք գիտեն ապրել միայն կապուտ-կողոպուտով, հայերին ճնշելով, թալանելով և մասամբ էլ խաշնարածութեամբ։ Քիւրդական այդ վայրենի ցեղերը իրանց խաշներով առհասարակ ապրում են ջուլամերկի, և Սղերդի կողմերում, որոնք իրանց տաք կլիմայի պատճառով շատ նպաստաւոր են, գէթ ձմեռ ժամանակ, այդ կիսամերկ ցեղերին պահելու և նրանց ոչխարների հօտերը կերակրելու համար։ Սակայն, ամառ ժամանակ, նրանք կարօտագին փնտրում են հովասուն ու ջրաբեր լեռներ։

Այդ կողմից՝ Սասունը, իր ձիւնապարդ գագաթներով և դալար ու հովասուն լեռներով ներկայանում է մի կատարեալ դրախտ քիւրդերի աչքին։ Ահա թէ ինչու այդ քիւրդերը միշտ ձգտել են գնալ և ամառուայ ամիսները անցկացնել Սասնոյ լեռներում։ Հին ժամանակները նրանք այդ անում էին Սասունցիների յատուկ թոյլտուութեամբ. տեղացիները նոյն իսկ շատ անգամ որոշ մարգագետիններ ու լեռնաշղթաներ վարձով էին տալիս քիւրդ ցեղապետներին։

Պէտք է ասել, որ այն „խաղաղ“ ժամանակներում, երբ սուլթանական նենգ քաղաքականութիւնը տակաւին չէր թափանցել Սասնոյ ազատ լեռները, Սասունցիները իբրև ազատ համայնքներ, դրացիական ու բարեկամական դաշինքներ էին հաստատել մի քանի նշանաւոր քիւրդ ցեղապետների հետ, նրանց տալիս էին տարեկան մի քանի նուէրներ և միշտ պատրաստ էին մէկ միւսին օգնութեան հասնելու՝ փոխադարձաբար։ Եւ քանի որ այդ դաշնը կար Սասունցի քիւրդերի և հայերի միջև, ոչ ոք չէր կարող նրանց ծուռ աչքով նայել. օսմանեան կառավարութիւնն իսկ չէր կարող մօտենալ նրանց սահմաններին և մի անարդար պահանջք անել։ Այդ ժամանակներում թիւրքաց կառավարութեան պաշտօնեաները՝ զօրականներ ու ոստիկաններ, աղաչանքով ու պաղատանքով էին մօտենում Սասունցի լեռնականներին։

Այս վիճակը շարունակուեց մինչև վերջին ռուս-թիւրքական պատերազմը և մի քիչ էլ աւելի։ Սակայն երբ թիւրքերը սկսեցին իրանց „չաթ ու փոթ“ հաւաքել Բալկանեան թերակղզուց և հետզհետէ աւելի ու աւելի քաշուեցին դէպի Հայաստանի խորքերը, և երբ օսմանեան զօրքը միացած բաշիբոզուկների հրոսակախմբերին՝ Կ. Պոլսի հրամաններին ենթակայ՝ փորձեց հետզհետէ գրաւել Ջուլամերկի, Տիգրանակերտի, Վասպուրականի ու Տարօնի քիւրդ ցեղապետները, Սասնոյ բոլոր հայ գաւառներն էլ քիչ քիչ կորցրին իրանց անկախութիւնը։ Միայն կեդրոնական Սասունն էր, որ իր լեռնային անառիկ դիրքի և ներքին սերտ դաշնակցութեան շնորհիւ՝ երկար ժամանակ անձեռնմխելի մնաց։ Նենգամիտ թիւրք փաշաները, վայրենի քիւրդն ու ցիկան ցեղապետները կատաղում, ատամ էին կրճտացնում, երբ լուրեր էին հասնում, թէ Սասնոյ լեռներում բնական, անթիւ անհամար հարստութիւն կայ։

Գլխաւորապէս ռուս-թիւրքական պատերազմից, ուրեմն Բերլինի վեհաժողովից յետոյ՝ թիւրք կառավարութիւնը այդ ազատ, բնութեան զաւակ լեռնականներին ևս իր ճնշող, սպանիչ լուծի տակ առնելու նպատակով՝ նրանց վրայ տուրք դրեց՝ մարդագլուխ 100 փարա։ Սակայն լեռը բարձրացող ոստիկանները և պաշտօնեաները ծեծ ուտելով էին յետ գնում։ Կառավարութիւնը անկարող էր հաւաքել այդ տուրքը։ Տեսնելով, որ ուժով ու սպառնալիքով չկարողացաւ գործը գլուխ բերել թիւրքը դիմեց „բաժանիր զի տիրեսցես“ քաղաքականութեան, և աջողեց մոլեռանդ շէյխերի միջոցով ձեռք առնել Սասունցի մի քանի քիւրդ աղաներին. դրա համար է, որ հայերը թիւրք կառավարութեան խորամանկ ընթացքը բացատրում են հետևեալ առակով. „Օսմանցին կառքով կը բռնէ նապաստակը“։ Եւ իրաւ։ Նենգամիտ սուլթան Համիտ կարողացաւ Ֆանատիկոս շէյխերի միջոցով որոմ սերմանել սասունցի քիւրդ ու հայ հարևան ու բարեկամ ցեղերի միջև։ Սիրտ առած դրանից՝ կառավարութիւնը հնար ունեցաւ ոչ միայն թեթև տուրք հաւաքել հայերից և ոչ միայն մարդագլուխ 100 փարա, ինչպէս որ նշանակուել էր առաջ, այլ այդ գումարը կրկնապատկեց, այն է՝ դարձրեց տարեկան մարդագլուխ հինգ ղրուշ։

Այս տուբքի հաւաքումը շարունակուեց Սասնոյ և Դալորիկի մի քանի գիւղերում մինչև 1884 թուականը, երբ Դալորիկի, Սպաղանքի և Հարթքի գիւղացիք կռուի բռնուեցին Ահարոնքի գայմագամի հետ, որը գնացել էր այնտեղ նոր տուբքեր սահմանելու և հիները գանձելու նպատակով: Գայմագամը ունէր իր հետ 30 ոստիկան զինուորներ. լեռնցիները նրանցից երեքին սպանում են, իսկ գայմագամին էլ մի լաւ ծեծելով՝ դուրս են գցում գաւառից: Այդ ժամանակից էր, որ Դալորիկը և Հայ-Սասունը սկսեցին անուն հանել և հետզհետէ շշուկներ առաջացնել հեռաւոր Հայ շրջաններում, իբրև մանուկ-յեղափոխական ցոյցերի կեդրոն...

Առաջ եկան նոր դէպքեր: Նոյն այդ միջոցին էր, որ Միացեալ Ընկերութեան ընդհանուր տեսուչ Մ. Սաբրեան ձերբակալուեց: Նրան յաջորդեց Մ... քաղաքում պ. Տ—եան, որը՝ տարուած երկրի մէջ ծլող շարժումներով՝ սկսում է աւելի ուշադրութեամբ հետևել Սասնոյ այդ ցոյցերին և առհասարակ այդ գրաւիչ լեռնավայրին: Նա մինչև իսկ Սասնոյ մի քանի գիւղերից աշակերտներ տարաւ իր կառավարած դպրոցը և նրանց միջոցով ուսումնասիրեց Սասունցոց լեզուն: Բացի դրանից, նա մի քանի անգամ, գաղտնի և յայտնի ուխտագնացութեան անունով, ճանապարհորդութիւններ կատարեց Սասնոյ լեռներում...: Հազիւ մէկ երկու տարի անցած Սասունցոց վերոյիշեալ ցոյցից՝ Մ. քաղաքում պատահած մի քանի ոչ նուազ կարևոր յեղափոխական միջադէպերի պատճառով՝ Տ—եան ստիպուեց Պոլիս գընալ: Սակայն Գումրգափուի ցոյցից յետոյ մենք տեսնում ենք նոյն երիտասարդին Սասնոյ ներկայ շարժման գլուխն անցած: Տ—եան երկար աշխատեց լեռնական հայերի և քիւրդերի մէջ եղած հին բարեկամական կապը վերահաստատել, սակայն Սասունցի քիւրդերը՝ նրան կարծելով

իբր լրտես՝ ղրկուած ռուսաց կառավարութեան կողմից, վախեցան և չմիացան հայերի հետ:

Միւս կողմից՝ Թիւրքաց կառավարութիւնը իմացաւ, որ Սասնում օտարական ագիտատորներ կան, որոնք դրդում են հայերին ինքնապաշտպանութեան և քիւրդ ցեղերի դէմ կռուելու, ուստի ամեն միջոց ձեռք առաւ՝ նրանց շուտով ձեռք գցելու: Թէև բաւականին ուշ, մնատուորապէս երեք տարի յետոյ, բայց և այնպէս կառավարութեանը աջողվեց Տ—եանին ու իր ընկեր Սողոմին ձերբակալել Սէմալ գիւղում և յաղթական թըմբուկներով տանել դէպի Բաղէշի բանտը: Սակայն գործը չմեռաւ: „Խմորը արդէն ձգուած էր:“ Դրանից յետոյ Սասունցոց ամեն մի շարժումը, ամեն մի քայլը, ամեն խօսքը աղգային Յեղափոխութեան նշան ու գոյն առաւ օսմանեան կառավարութեան աչքում, և նա տեղի-անտեղի առիթներ էր փնտրում՝ ջնջելու, շուտով անհետացնելու այդ մի բուռն անվեհեր լեռնականներին:

Դրան ապացոյց կարող է լինել այն, որ 1893 թուի ամառը կառավարութիւնը դրդեց և ոյժ տուեց վրանաբնակ քիւրդերին՝ գնալու Դալորիկի և Սասնոյ լեռները վրայ հաստատուելու: Սակայն հազիւ էին նրանք հասել Դալորիկի սարերին, երբ պատահեցին քաջարի Դալորիկցի գնդերին և Դժոխքի հայդուկային խումբերին: Մի քանի օրուայ կատաղի ճակատամարտերից յետոյ, քիւրդերը բազմաթիւ դիակներ թողնելով կռուի դաշտում ու Դալորիկի ձորերում, ամենապարտ յետ նահանջեցին, և երկար ժամանակ չէին համարձակուում մնտենալ հայոց սահմաններին: Ահա դրանից յետոյ էր, որ Թիւրք կառավարութիւնը վճռեց, թէ հարկաւոր է վերջապէս շուտով կտրական գործողութեան դիմել՝ Սասունցիների ուժը ջախջախելու համար. մանաւանդ, երբ իմացաւ որ Կովկասից կրկին այնտեղ է վերադար-

ձել Սասունցիներին լաւ ծանօթ Մուրատը... Բռնապետութիւնը ինքը գրգռեց ու ստեղծեց արդար դիմադրութիւն լեռների բնակիչների մէջ, և այժմ այլևս ոչ մի միջոցի առջև կանգնել չէր ուզում՝ այդ դիմադրութիւնը խեղդելու համար...

Կառավարութիւնը նախ պահանջեց, որ իրեն յանձնեին Սասուն գտնուող օտարականները: Սասունցիները մերժեցին: Այն ժամանակ յայտնեց, որ լեռնցիները պարտական են եօթ տարուան ետ մնացած տուրքերը շուտով ու միանւագ վճարել, և բացի դրանից՝ Սասունի բոլոր գիւղապետները, ռէսները և իշխանները պիտի գնային Մուշ, ներկայանալու կառավարութեան և իրանց հպատակութիւնը յայտնելու: Եւ որովհետև այդ դէպքերից մի տարի առաջ խաբել էին Սէմալի Գուրգեն և Շէնը.քցի Ազօն իշխանները, Մուշ՝ կառավարութեան դուռը գնալիս ձերբակալելը, Բաղէշ տարել և այնտեղի բանտում չարաչար տանջանքով նահատակել էին, ուստի հայերը վերոյիշեալ երկու պայմանն էլ մերժելով մերժեցին, յայտնելով որ իրանք Մուշի կառավարութեան չեն հաւատում և նրա հետ ոչ մի գործ ունենալ չեն կարող. իսկ ետ մնացած և դիզած ՝ահագին տուրքերի վերաբերմամբ աւելացրեց. „Մենք փող չունենք, երբ ունենանք՝ կըտանք“:

Թիւրքական լրտեսները „կրակի վրայ իւղ ածեցին“: Նրանք տենդային գործունէութեան մէջ էին և ամեն տեսակ շինծու տեղեկութիւններ էին տալիս Սասնցոց ամեն մի շարժման մասին: Շատ անգամ էլ իրանց անձնական շահի համար, այդ լրտեսները գործը չափազանցնում էին, տեղեկացնելով թէ Սասնում չափազանց շատ օտար հայեր կան, թէ իրանք տեսել են մի քանի բանակ փափախլի կեավուրներ, թէ մեծ քանակութեամբ զէնք կայ ամբարած Սասուն: Լրտեսներից մի քանիսը

նոյն իսկ հաւատացրել էին, թէ իրանք իրանց աչքով տեսել են չորս-հինգ կրուպի թնդանօթներ Սասունի լեռներում, իբր թէ գնուած նոյն իսկ թիւրքերից... Տեղական անմիտ կառավարութիւնը, մանաւանդ Բաղէշի հայատեաց թահսին փաշան, գլուխը կորցրած այդ սըտայօդ լուրերից, աշխատեց խնդրին որքան կարելի է սարսափելի գոյն տալ՝ կ. Պոլսից շքանշաններ ստանալու յոյսերով... Ահա թէ ինչու նա գարնանամուտին լուր ուղարկեց բոլոր վրանաբնակ ու թափառաշրջիկ քիւրդ աշիրաթներին և ցեղապետներին, որ ամառը սկսելուն պէս գնան ու ամենայն պատրաստութեամբ հաստատուեն Սասնոյ լեռներում:

„Գայլերը տուման օր կ'որոնեն„, քիւրդերն էլ մի այդպիսի հրաման: Ուստի ամառը սկսելուն պէս, նրանք ամեն կողմից համարձակ եկան և հաստատուեցին Սասնոյ լեռներում ու նոյն իսկ այն աստիճան մօտեցան մի քանի գիւղերի, որ հայերի տաւարը, ոչխարը այլև կանայք անկարող էին անվտանգ տնից դուրս գալ՝ բանջարանոց, արտ ու ափ գնալ գալու համար: Սկսեցին մանր մունր գողութիւններ և անախորժ դէպքեր: Սկզբում հայերը խնդրագրերով, Մուշի առաջնորդարանի միջոցով, բողոքեցին Բ. Դրան, սակայն ինչպէս միշտ, այս անգամ էլ այդ բողոքները մնացին „ձայն բարբառոյ յանապատի“: Այն ժամանակ հայերը վճռեցին դիմել գործելու նոյն եղանակին,—երբ քիւրդերը գալիս էին ու նրանց ոչխար-տաւարը տանում, հայերն էլ գնում՝ նրանցն էին բերում: Կառավարութիւնը բացարձակ աջակցութիւն ցոյց տուեց քիւրդերին: Դեռ յունիսի վերջերը նա 250 հոգուց բաղկացած մի գունդ ուղարկեց Մէրկէ-Մօղան ասած տեղը բանակելու՝ քիւրդերին քաջալերելու, խրախուսելու և միւս կողմից էլ հայերի շարժումները մօտիկից դիտելու համար: Իբրև

3891-48

լուսն այդ բոլորի՝ ամբողջ Սասունը դրուեց պաշարման ամենախիստ վիճակի մէջ...

Այդ անսովոր խստութիւնների շնորհիւ՝ Սասունցիները բոլորովին զրկուեցին դրսի հետ կանոնաւոր յարաբերութիւն ունենալուց,—նրանք հացի և աղի համար իսկ չէին կարող ո՛չ Մուշ գնալ, ո՛չ Մուշի դաշտի գիւղերը և ո՛չ էլ աւելի հեռուն՝ դէպի հարաւ, Տիգրանակերտ ու Խարզան քաղաքները:

Սասունցոց վիճակը տագնապալի էր: Կառավարութեան դրդման շնորհիւ՝ հայերի և քիւրդերի յարաբերութիւնները այն աստիճան լարուած էին, որ արիւնահեղ ընդհարումներ, թէև մանր, դարձել էին քրոնիկական: Վճռական նշանակութիւն ունեցաւ Բ ա դ ը ք ց ի քիւրդերի յարձակումը, երբ նրանք եկան տանելու Շէնըքցոց ոչխարը: Համբերութիւնը հատած՝ Գըրգօն իր խմբով նրանց ետևից ընկաւ, և մի ընդհարումից յետոյ, աջողեց քիւրդերից 3-4 մարդ սպանել ու ոչխարի կէսը յետ վերադարձնել: Նոյն միջոցին՝ Մուրատի խումբն զբաղուած էր Անտօքի կողմերում,- Խանցի աշիրաթի ոչխարը բերել՝ ի վրէժ այն բանի որ քիւրդերը փախցրել էին Դալորիկցոց ձիերն ու ոչխարը: Խումբը կռուի է բռնուում քիւրդերի հետ. կռիւը տևում է ամբողջ 36 ժամ. սպանուում են 17 քիւրդ և 3 հայ, բայց և այնպէս այդ հայ կուռոնները աջողում են բերել Սասուն 1500 գլուխ ձի, ոչխար, տաւար և այլն:

Այդ երկու դէպքերը, որ տեղի ունեցան գրեթէ միաժամանակ, մեծ սարսափ ու զայրոյթ ազդեցին քիւրդ աշիրաթների վրայ, որոնք սկսեցին խիստ կերպով բողոքել հայերի դէմ, Մէրկէն-Մօղան նստած զօրավարների միջոցով. թէ Մուշի կառավարութեան և թէ Բ. Դրան: Առիթ բռնելով այդ դանգատները, Բ. Դուռը իսկոյն և եթ խիստ հրամաններ է արձակում՝ պ ա շ ա ր ե լ

Սասունը, այրել, քանդել ամեն ինչ և ոչնչացնել „ապստամբներին", այլ խօսքով՝ իրանց կեանքն ու գոյքը պաշտպանող բնակիչներին:

Ահա այդ միջոցին էր, որ Սասնոյ բոլոր ներկայացուցիչները, իշխանները և ռէսները կազմեցին վերջին ընդ հ ա ն ո ւ ր ժ ո ղ ո վ ը,—որի նկարագրութիւնը նախորդ գլխում առաջ բերինք—իրենց այս օրհասական ու տարօրինակ վիճակի մասին մտածելու համար:

Ժողովի արդիւնքը՝ Զայի կռիւն էր:

Զ Ա Յ Ի Կ Ռ Ի Ւ Ը

Ալիանք՝ Գէլիէ-Գուզանի մի մասն է, Շէնըք—Սէմալից 3/4 ժամ հեռու դէպի հարաւ: Ներկայացնում է անտառոտ ու տեղ տեղ էլ քարքարոտ մի լեռնադաշտ և ունի ցիր ու ցան մի քանի մանր գիւղեր: Հիւսիսային կողմը՝ արևելքից դէպի արևմուտք՝ վազում է մի մեծ գետ, որին տեղացիները անուանում են Զայ (գետ) և որ Տօրոսի լեռնաշղթան բաժանում է Գէլիէ-Գուզանի ու Անտօքի լեռնաշղթայից:

Առաւօտը վաղ, դեռ չը լուսացած, այստեղ էին հաւաքուել Շէնըք և Սէմալ գիւղերի բնակիչները, Գէլէցի ու Դալորիկցի օգնական խումբերը, իրանց խմբապետներով, գիւղապետներով և քահանաներով: Այդտեղ հասան շուտով Մուրատն ու Գըրգօն իրանց քաջերով, որոնք գիշերը փոքրիկ ընդհարում ունենալով քիւրդերի հետ՝ վերադարձան Ալիանք, պատրաստուելու մեծ կռիւին:

Հեռաւորութեան վրայ երևում էր թշնամու բանակը, որ սև ամպի նման փուել էր Սիմ լերան ստորոտներում: Այդ տեղից հայ ժողովուրդը մորմոքումով դիտում էր այրուող գիւղերի մուխն ու ծուխը, և վրէժ մրմնջում...

Ահա առաջ անցաւ Մուրատ։ „Ժամանակ է բանակը կարգի բերելու. թշնամին մօտենում է կամաց կամաց. Ուրեմն դու, Գրիգոր, քու խումբով և Սէմալցիներով բռնիր աջ կողմը. իսկ դուք՝ Աւո, Պետո, Սագո, առէք Գէլիցի ու Ալիանցի ձեր քաջերը և խմբապետ Պողոսի հետ միասին անցէք դէպի ձախ թեւը։ Իսկ դուք, Տէր Գաբրիէլ և Տէր Քաջ, առէք Դալորիկցի քաջերը և մեր Գէորգի ու Ադամի հետ կանգնեցէք մէջտեղ ու սպասեցէք իմ կարգադրութիւններին“։

Բանակի անմիջապէս ետեւը կանգնել էին հայ կանայք ու աղջիկներ, որոնք մատակարարում էին տղամարդոց գընտակ, վառօդ, փամփուշտ, ինչպէս նաև ուտելիք ու խմելիք։ Անվեհեր սասունցուհիների մէջ աչքի էին ընկնում իրանց քաջութեամբ Ալիանցի Հաւսէն, 67 տարեկան, եօթ արու զաւակների մայր, Շաքէն՝ Գրիգոյի հարսը և Մարգոն՝ Սէմալցի հանգուցեալ Գէորգէի մայրը։ Շաքէն կանգնած էր անմիջապէս Մուրատի ետեւը և պատրաստ էր մինչև վերջ օգնելու նրան պատերազմական գործերում։

Երբ գունդը արդէն կազմ ու պատրաստ էր, Մուրատ կարգադրեց երգել „Մեր հայրենիք“։ Հաղիւ աւարտուած՝ նա առաջ անցաւ և յուզուած՝ այս դիմումն արաւ. „Սիրելի եղբայրներ, քաջ ընկերներ. այսօր մեզ համար տօնի և ուրախութեան օր է, որովհետև մենք կռւում ենք հայրենիքի ազատութեան համար։ Գուցէ մեզանից շատերը ընկնեն այսօր կռւի մէջ ու մեռնեն, բայց այդ մահը կը լինի մեր պարծանքը, մեր պսակը։ Զը վհատւենք թշնամու բազմութիւնից, նա անարդար է, նա շուտով կը տապալւի։ Մեր կռնակը ցոյց չտանք թշնամուն. ցոյց տանք, որ մենք արժանի զաւակներ ենք մեր քաջ նախահայրերի, հերոս Սասունցիների, կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Սասուն, կորչի՛ Թիւրքը“։

Բազմութիւնը որոտընդոստ ձայնով կրկնեց. „Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Սասուն, կորչի՛ Թիւրքը“։

Եւ մինչդեռ քահանաները սկսեցին ժողովրդի հոգևոր պիտոյքները հոգալ, ոմանց խոստովանեցնելով, ոմանց էլ հաղորդելով միւսները, խմբեր կազմած՝ երգեցին ռազմական երգեր.

Անուօք, Ծովասար, Կէփին, Մարաթուկ,
Կը կանչեն. հարեր մեռուկ մնաք դուք,
Բեզրանք նստելուց, մենք կռւիլ կ՚ուզենք,
Միայն, աղբրաիք, տէր մեզի զէնք։

Արեւը դեռ նոր էր ծագել Ծերնկատարի ու Ծովասարի լեռների ետեւից և իր արծաթափայլ շողքերի մէջ խամրեցրել անտեսանելի դարձրել Շէնքը ու Սէմալ գիւղերի աւերակ մոխրակոյտերը, երբ հայ պատմական լրաբերները շնչասպառ գուժեցին քիւրդ ու թիւրք բանակի առաջխաղացումը։

Հայ խմբապետները՝ դիտակ առնելով զննեցին թշնամու գունդը, որ խառն ի խուռն, զանազան մասերի բաժանուած՝ դանդաղութեամբ առաջանում էր, աւերելով, քանդելով ու հրկիզելով ամեն ինչ, որ պատահում էր իր ճամբին։ Ակնյայտնի էր, որ քիւրդերի հետ միասին կային և օսմանեան կանոնաւոր զօրքեր։ „Թիւրք կասին կային և օսմանեան կանոնաւոր զօրքեր։ „Թիւրք կառավարութիւնը միացել է քիւրդի հետ, այս պատերազմը տէրունական է“,—լսւեց հայկական բանակի զաբազմը տէրունական է“,—լսւեց հայկական բանակի զաբազմը նաղան կողմերից։ „Այս խմբը ջուր շատ կը վերցնի։“

Ի՞նչ որ լինելու է, թող լինի. . . ։ Եւ հայերը նետեցին դէպի առաջ, թշնամու դէմ։ Քիւրդերը երեք մասի բաժանուած՝ իրենց ճերմակ, կանաչ, կապոյտ գլուխներով սալաւաթ տալով, առաջ էին գալիս։ Ահա նրանց շէյխը, որ ձի նստած՝ համարձակ մօտենում էր . . . Սակայն նա առաջի գնդակներից մէկի զոհ եղաւ և գլորւեց։ Ճակատամարտը դարձաւ օրհասական ու երկարատեւ։ Հայերը աւելի էին կուստեք էլ կատաղի և որքան քիւրդերը աւելի էին

մարախի նման վար թափուում, այնքան էլ աւելի ուժգին իրար տրորելով առաջ էին գալիս, մոլեգնաբար ու կատաղած։ Նրանք այնքան մօտեցան, որ Սասունցոց հին չախմախլի հրացանի հարուածները, սկսեցին ապատօրէն հասնել Թշնամու շարքերին։ Բարեբախտաբար, արևը գնալով թեքուում էր դէպի հարաւ և իր այրող ճառագայթները շեշտակի խփում Թշնամու ճակատին ու աչքերին. նա ընկճուում էր ու չէր կարող առաջանալ։ Եւ երբ քաջ ու խիզախ Գրիգոն աջ կողմից, և Ալիանցի Պողոս իր անմահ քաջերով միւս կողմից՝ պաշարեցին քիւրդերի գլխաւոր թևը և սկսեցին կրակ տեղալ նրանց վրայ, Թշնամին կանգ առաւ, շշկլուած, ահաբեկ... Քիչ անցած՝ նա սկսեց յետ նահանջել... Իսկ այն միջոցին, երբ Գրիգոյի ձեռքով սպանուեց Բրքրանցի աշիրաթապետ Աւտալ աղան, քիւրդերի շարքերում լսուեց մի անբնական ոռնոց... խելակորոյս՝ նրանք իրար անցան և սկսեցին ցիր ու ցան, խառն ի խուռն փախչել։ Հայերը, կրկնակի սիրտ առած այդ աջողութիւնից, աւելի ևս առաջ անցան և հալածեցին նրանց մինչև գետի միւս կողմը։ Սակայն, որովհետև հայերի կորուստն ևս այդտեղ բաւական զգալի էր, չհամարձակեցան հալածանքը երկար շարունակել և անցնել գետի միւս կողմը, ուր եկել հաստատուել էր օսմանեան մի զօրաբանակ, լեռնային թնդանօթներով ու ռազմամթերքով։

Յաղթական ճակատամարտը տևեց ընդամենը եօթ ժամ։ Թշնամու կորուստը շատ մեծ էր։ Բազմաթիւ քիւրդ ու թիւրք դիակներ ծածկել էին Ալիանքի լեռնահովիտը և ձորերը։ Հայերի ձեռքն անցան բաւական քանակութեամբ հրացան ու ռազմամթերք։ Աւար առնուած զէնքերի մէջ կային և բազմաթիւ արքունական հրացաններ։ Սակայն համապատասխան փամփուշտներ չգտնելով, ստիպուած էին կոտրտել և չօգտուել նրանցից։

Արևը մար մտնելու վրայ էր, երբ հայերը իրանց սպանուածներին—թուով 71—ամփոփեցին հողի տակ և վիրաւորներին, մօտ 140, առնելով քաշուեցին Մերկեր ասուած բարձրավանդակը։

Ազգու եղաւ այդ կռուի տպաւորութիւնը։ Լուրեր էին պատում մէկը միւսից աւելի ոգևորիչ։ Քիւրդերի մէջ, որոնք, ականատեսի պատմելով, կռուի դաշտի վրա թողին աւելի քան 2,200 դիակներ, տիրում էր սոսկում։ Երբ փախուստ տալով հասան Սիմ լերան ստորոտին, օսմանեան կանոնաւոր զօրքի բանակին, բռնուած երկիւղից՝ դարձեալ շարունակում էին փախչել և միանգամայն զգուշացնել զօրքերին, որ նրանք էլ շուտով ձգեն հեռանան այդ տեղերից՝ գեավուրների ձեռքից ազատելու համար։ Դրա հետ միասին պատմում էին հայերի մասին արտաքոյ կարգի առասպելներ,- թէ այնտեղ եղածները բոլորն էլ „Մոսկովի գեավուրներից“ են, թէ մեծ-մեծ թնդանօթներ ունեն, և որ աւելին է՝ նկարագրում էին թէ նրանց մէջ կան վիշապանման մարդիկ, որոնք միայն մէկ աչք ունեն ճակատի վրայ, անխոցելի են և մանաւանդ այնպիսի հրանօթներ ունին որ մի ռումբ արձակած ժամանակ սար ու ձոր կը լուսաւորեն։

Սոսկումը տարածուում էր։ Մուշ, Բաղէշ և շրջակայ ուրիշ քաղաքներում մեծ յուզում կար. երկիւղից այն կարծիքին էին եկել՝ թէ Սասունցիք քաղաքների վրայ պիտի յարձակուեն, թէ ապստամբութիւնը ընդհանուր է, թէ „գեավուրները“ ամեն տեղ բանակներ ունեն, թէ վերջապէս օդապարիկով բազմաթիւ ռուսահայեր են եկել լեցուել երկիրը . . . . . .

—

Զայի կռուից քանի մի օր անցած՝ Թիւրքաց զօրքը բռնեց ռազմիկ-լեռների ճամբան։ Կասկածոտ կառավարութիւնը նպատակ դրեց Սասունի կործանումը։ Բաղէշի

կուսակալ Թահսին փաշան անցաւ արշաւանքի գլուխը և գնաց դէպի Գէլիէ-Գուզան։ Խալիլ փաշան բաժին վերցրեց Անտօք. Զէյթի փաշային յանձնուեց Գէլիի մի այլ մասը։ Եւ սկսուեց կատաղի կռիւը, լեռների լանջերին, ձորերի մէջ, Գրոփքը քարի մօտ, գետափերին։

Լեռնցին կուրծքը դէմ տուեց կանոնաւոր զօրքին, որ զինուած կառավարութեան հրացաններով և հրամաններով, դուրս էր եկել կոտորելու ինքնապաշտպան ժողովրդին։ Հերոսական մնաց լեռնցին, հերոսական նոյն իսկ անկման ու վտանգի գերագոյն րոպէներին, երբ Գրրգօն կռւի դաշտի մէջ, Շաքէն՝ իր ընկերուհիներով ժայռի գլխին, և ապաբախտ Սէմայլցիները մարդկային-սպանդանոցի մէջ, իրանց կեանքը տուին սիրած ազատութեան համար . . .

Եկան փորձանքի օրերը, օրեր դառն, արիւնոտ, յուսահատական։ Արիւնը հոսեց գետի նման։ Դիակները թափուեցին կարկուտի պէս։ Բայց Հայ-Սասունը մնաց միշտ արիութիւնը սրտում, կռւի տաղերը՝ շրթունքներին՝

Դալլարիկցի կարիճ եմ քաջ,
Չեմ տեսեր ո՛չ արօր ո՛չ մաճ,
Քարոտ լերանց ես ազատ լաճ,
Չեմ խոնարհիր թուրքին առաջ։

Եւ կոտորածների սոսկալի պատմութեան մէջ, ամեն անգամ, երբ վիշտն ու յուսահատութիւնը տիրում են հային, Սասունը՝ Զէյթունի արժանաւոր ընկերը՝ հանդէս է գալիս իբրև նոր յոյսերի աղբիւր, դրստում է հայի կորացած մէջքը, տալիս է մարած աչքերին՝ փայլ, դալուկ շրթունքներին՝ հպարտութեան ժպիտ . . .